

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՑԱՆ

ՀՀ ԳԱՄ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.թ., պրոֆեսոր

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԱՋՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՎՐԱ

Ժամանակի ընթացքում քաղաքական և տնտեսական համագործակցության ձևերը լուրջ փոփոխությունների են ենթարկվել: Դրանք այսօր ուղղակիորեն կախված են երկու կարևոր միտումներից՝ *գլոբալացում և տարածաշրջանայնացում*: Երկու միտումներն էլ, իրենց հերթին, մեծ ազդեցություն ունեն մարդկային զարգացման վրա: Տարածաշրջանայնացումը գլոբալիզացիայի համընդհանուր միտման թերևս ամենաէական հակակշիռն է: Տնտեսական զարգացման առումով անցման փուլում գտնվող երկրներից շատերը կարող են ազգային տնտեսության ձևավորումն ու դրա վերելքը պայմանավորել ոչ այնքան գլոբալացմամբ, որքան տարածաշրջանայնացմամբ, այլ խոսքով՝ տարածաշրջանային ակտիվ համագործակցությամբ: Իր հերթին տարածաշրջանային համագործակցության ծավալումը /օրինակ՝ Կովկասում ձևավորվող ընդհանուր շուկայի, Սևծովյան տնտեսական համագործակցության, Հայաստան-Հունաստան-Իրան, ԱՊՀ և այլ հնարավոր միությունների շրջանակներում/ ենթադրում է, մի կողմից, ազգային առանձնահատկությունների և համեմատական առավելությունների բացահայտում ու իրացում, մյուս կողմից, համաշխարհային տնտեսության ներսում առկա գործընթացներին մերձեցում և տարածաշրջանային այլ խմբավորումների հետ սերտ կապերի զարգացում: Հետևաբար, անհրաժեշտ է վերլուծել համաշխարհային տնտեսության այն միտումները, որոնք կանխորոշում են գլոբալացման ընդհանուր գործընթացը և դրա դրսևորումները տարբեր երկրներում և տարածաշրջաններում:

Համաշխարհային տնտեսության ներսում նկատելի են ինչպես տասնամյակներով շարունակվող հիմնական, այնպես էլ նոր, երբեմն հակասական բնույթ կրող միտումներ: Միասին վերցրած բազմաբնույթ տնտեսական միտումները պայմանականորեն կարելի է դասակարգել մի քանի գերմիտումների խմբերի: Վերջիններս, իրենց հերթին, ոչ միայն զգալի ազդեցություն ունեն զարգացած և զարգացող երկրների տնտեսությունների վրա, այլև հստակ կանխորոշում են յուրաքանչյուր երկրի և երկրների խմբերի ու միությունների տեղը մարդկային զարգացման ընդհանուր գործընթացում: Այս ամենով հանդերձ՝ պետական հովանավորչության, մերկանտիլիզմի, նեոմերկանտիլիզմի տարածված հետևանքներից երկրների երբեմնի մեկուսացած կամ փակ կարգավիճակներն իրենց տեղը զիջել են քաղաքական ցնցումներով միջնորդված տնտեսական մերձեցմանն ու փոխկախվածությանը, երբ մեկ երկրում տեղի ունեցող առավել էական տեղաշարժերն անհրաժեշտաբար պայմանավորում են այլ երկրների համար ևս կանխատեսելի տնտեսական զարգացումներ:

Տնտեսական գլոբալացման պայմաններում փոփոխության են ենթարկվել ինչպես ներդրումներ ընդունող երկրների, այնպես էլ ներդրումներն իրականացնողների, հատկապես անդրազգային ընկերությունների հնարավորությունները: Մի կողմից, դրանց ակտիվները դարձել են առավել մոբիլ և գիտատար, որի արդյունքում ներդրողներն ավելի մեծ ուշադրություն են դարձնում այլընտրանքային տեղակայման վայրերում ստեղծված ակտիվների առկայությանը և որակին, մյուս կողմից մեծացել է զարգացող երկրների խմբերի միջև գոյություն ունեցող

տարբերությունն օտարերկրյա ներդրումների տեսանկյունից: Ներդրումների միջազգային հոսքերի մասին տվյալները փաստում են, որ զարգացող երկրների թվում նոր ինդուստրիալ երկրները ներդրումների համար նախընտրելի տեղակայման վայր են: Միաժամանակ, բույլ զարգացած երկրների շրջանում ընդհանրական է դարձել ներդրումային ծրագրերի արտաքին աղբյուրների ներգրավման վրա հիմնված զարգացման ռազմավարությունը, ուստի գնալով մեծանում է այդ երկրների միջև ներդրումների համար մրցակցությունը:

Ներկայումս միջազգային ներդրումային ծրագրերում հատկապես կարևոր նշանակություն են ձեռք բերել գլոբալացման հետևյալ բաղադրիչները.

ա) նոր տեխնոլոգիաների, մասնավորապես տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների արագ զարգացումը, գործնական կիրառությունը, որոնց արդյունքում միջազգային գործարքներում էապես կրճատվեցին հաղորդակցման և կազմակերպչական ծախսերը,

բ) ազգային ու միջազգային շուկաների համատարած ազատականացումը:

Վերոհիշյալ գործընթացները զգալի ներգործություն ունեցան միջազգային ներդրումային ծրագրերը պայմանավորող գործոնների վրա: Այդ փոփոխությունների վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել դրանց ազդեցությունն անդրազգային ընկերությունների՝ որպես միջազգային ներդրումային ծրագրերի հիմնական կատարողների և ներդրումներ ընդունող երկրների վրա, ինչպես նաև այս ամենի ուղղակի ազդեցությունը՝ մարդկային զարգացման վրա: Ընդհանուր առմամբ, տնտեսական գլոբալացումը բնութագրվում է ինչպես առանձին միտումներով, այնպես էլ հստակ ցուցանիշներով, որոնց համակարգված պատկերը ներկայացված է ստորև:

Աղյուսակ 1

Տնտեսական գլոբալիզացիայի ցուցանիշներ, 2006¹

	Ապրանքների առևտուր ՀՆԱ-ի %	Ապրանքների առևտուր, ապրանքների ՀՆԱ-ի %	Համախառն մասնավոր կապիտալ հոսքեր, ՀՆԱ-ի %	Համախառն օտարերկրյա ուղղակի ներդրումներ ՀՆԱ-ի %
Եկամուտ				
Ցածր եկամուտ	8.3	62.5	2.0	0.9
Միջին եկամուտ	22.1	98.9	6.4	1.6
Բարձր եկամուտ	38.3	95.1	22.3	5.7
Տարածաշրջաններ				
Արևելյան Ասիա / Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան	15.5	98.1	4.0	1.3
Կենտրոնական և Արևելյան Եվրոպա / Կենտրոնական Ասիա	21.1	106.4	3.8	1.0
Լատինական Ամերիկա / Կարիբյան տարածաշրջան	19.1	74.5	7.1	2.5
Մերձավոր Արևելք / Հյուսիսային Աֆրիկա	17.4	80.5	7.3	0.9
Հարավային Ասիա	4.8	40.5	0.9	0.1
Անդրսահարյան Աֆրիկա	16.8	99.5	4.9	0.7
Եվրոպական տարադրամային միություն	54.4	106.4	32.2	6.1

¹ Աղբյուրը՝ World Bank, World Development Indicators 2006: Հաշվարկված է ԱՄՆ դոլարով՝ ճշգրտված գնողունակության պարիտետի համար: Շեղազիր տվյալները այլընտրանքային տարվա համար են:

Կարևորագույն միտումներից մեկը, որով պայմանավորված է գլոբալացման ընդհանուր միտումը, տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումն է՝ թե՛ էվոլյուցիոն և թե՛ հեղափոխական բնույթի նորամուծություններով: Հսկայածավալ տվյալներին տիրապետումը, որն անհրաժեշտ է խոշոր ընկերությունների՝ աշխարհով մեկ ցրված մասնաճյուղերի և գործընկերների հետ աշխատանքները արդյունավետ համադրելու համար, չափից ավելի բարդ խնդիր է՝ առաջադրված միջին ունակությունների տեր գործարարին միայնակ լուծելու համար: Այս իմաստով անգնահատելի օգնություն են տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների վերջին տարիների ձեռքբերումները՝ լուծելու նախկինում անկառավարելի թվացող հարցերը:

Միջազգային միություններ կազմելու ոչ բոլոր փորձերն են, որ կարելի է դասել համաշխարհային կամ ռազմավարական կառույցների շարքը. դրանցից մի քանիսն ուղղակի ընդլայնված տարրերակն են ավանդական հաճատեղ ձեռնարկություն – տեղայնացված գործընկերություն կապի, որի հիմնական կիզակետը ազգային շուկաներից մեկն է ընտրված: Նման օրինակներից է Չինաստանի և ԱՄՆ-ի միջպետական համագործակցության արդյունք համարվող Ջեներալ Մոտորս ընկերության մասնաճյուղը Չինաստանում՝ մասնագիտացած դիզելային շարժիչների և մեխանիկական մասերի համատեղ արտադրության մեջ: Գործընկերության այլ օրինակ կարող են ծառայել տարրեր երկրների ընկերությունների պայմանական, ժամանակավոր միացումները, որոնք միջազգային շուկաներում կայուն տեղ գրավելու համեմատաբար նվազ մտադրություն ունեն. այս պայմանական կառույցները սովորաբար նախընտրում են կարճաժամկետ, մարտավարական մաս ապահովել իրենց համար արտադրության կամ շուկայի ուսումնասիրությունների ասպարեզներում: Գործընկերային քիչ կառույցներ են ընդլայնել գործունեության շրջանակները՝ նպատակ հետապնդելով կենտրոնաճալ աշխարհագրական որևէ տարածաշրջանում այնպես, ինչպես դա հաջողվեց եվրոպական տնտեսական համագործակցության պարագայում¹:

Ավելի կարևոր, սակայն դեռևս համաշխարհային չեն այն կառույցները, որոնք նպատակ են հետապնդում գրավել շուկաները համաշխարհային տնտեսության ուժի երեք հիմնական կենտրոններում՝ Միացյալ Նահանգներում, Արևմտյան Եվրոպայում և Ճապոնիայում: Նույնիսկ դրանք չեն կարող համարվել ռազմավարական գործընկերության համաշխարհային կառույցներ՝ ըստ ընդունված ձևակերպման: Վերջիններս պետք է բավարարեն հետևյալ հիմնական պահանջները.

- 1) բաղկացած լինեն երկու կամ ավելի ընկերություններից, որոնց ընդհանուր, երկարաժամկետ ռազմավարությունն է՝ միջազգային ասպարեզում շահել առաջնորդի համաշխարհային դիրքեր՝ որպես ցածր ինքնարժեքով մատակարարողներ, բազմաբնույթ շուկաներ տրամադրողներ, կամ երկուսը միասին վերցված,
- 2) ներսում կիրառեն փոխադարձության սկզբունքը. յուրաքանչյուր կողմը, ունենալով որոշակի հզորություն, այն պատրաստ լինի ծառայեցնելու գործընկերների և կառույցի ընդհանուր շահերին,
- 3) ունենան գործընկերության համատեղ գործողությունների համաշխարհային շրջանակներ՝ ընդլայնելով դրանք մի քանի զարգացող երկրներից մինչև քաղաքական տարրեր համակարգերում գտնվող նոր արդյունաբերական և թույլ զարգացած երկրներ,
- 4) կիրառեն գործընկերության ոչ թե ուղղահայաց, այլ հորիզոնական կապեր՝ փոխանակելու տեխնոլոգիաներ, համատեղ օգտագործելու առկա ռեսուրսները, ինչպես նաև օգտագործելու միավորման արդիական այլ ձևեր,

¹ H.V.Perlmutter and David Heenan, "Cooperate to Compete Globally", Harvard Business Review, March-April 1986, p. 137.

5) ապահովեն մասնակից ընկերությունների համար ազգային և գաղափարական ինքնությունը պահպանելու անհրաժեշտ պայմաններ՝ գործընկերության մեջ չմասնակցող երկրների շուկաներում մրցակցություն ծավալելիս:

Մյուս կարևորագույն միտումը *միջազգային դրամական համակարգի ազատականացումն է*: Ոսկու համաշխարհային ստանդարտի փլուզմամբ սկիզբ դրվեց լողացող փոխարժեքների կիրառմանը, որն իր հերթին լրացուցիչ հնարավորություններ ընձեռեց արտասահմանյան ներդրողների համար: Յոթանասունականներին գերաթևողված դոլարն ԱՄՆ-ից դուրս միջին հաշվով 50 տոկոսով ավելի էր գնահատվում՝ դրանով իսկ խիստ շահավետ դարձնելով դոլարով արտահայտված արտասահմանյան ներդրումները¹: Այսպես օրինակ, ամերիկյան Ֆորդ Մոտորս ընկերությունը, որը զգալի դժվարություններ էր դիմագրավում երկրում, ի հաշիվ Եվրոպայի իր մասնաճյուղերի, կարողացավ մշակել ավտոմեքենայի նոր մոդելներ, որոնք ընդամենը հինգ տարի հետո նրան հասցրին փառքի և շահույթի բարձրագույն աստիճանների: Ներկայումս նկատվող դոլարի շարունակական արժեզրկումը փոխել է մրցակցության կանոնները և պայմանները՝ ավելի շահավետ դարձնելով արտասահմանյան ներդրումները հենց Միացյալ Նահանգների տնտեսության ներսում: Այս միտումը մեր կողմից առանձնահատուկ ուշադրության է արժանի մասն առնում, որ միջազգային դրամական համակարգն այսօր չի կատարում միայն միջազգային առևտուրն ընդունելի վճարամիջոցներով սպասարկելու իր մախկին դերը: Փոխվել է դրամական համակարգի դերը մաս երկրի տնտեսության ներսում: Անցնող հինգ տասնամյակների ընթացքում արտադրության հանդեպ ունեցած երկրորդական, երրորդական, ածանցյալ դերից այն երբեմն կարող է դառնալ մասն առաջնային, արտադրության հետագա ընթացքը կանխորոշող գործոն: Բացի այդ, թղթադրամը փողից ապրանքի վերածվելու գործընթացը ևս որոշակիորեն փոփոխեց համաշխարհային շուկայում ուժերի հարաբերակցությունը՝ ավելի սրելով մրցակցությունը տնտեսական ուժի երեք կենտրոնների միջև:

Քաղաքական թշնամանքի, հակամարտության զգալի նվազումը ևս համաշխարհային տնտեսության կարևոր միտումներից է: Առևտրային արգելքների վերացումը, տարբեր երկրների միջև քաղաքական տարբերությունների համահարթեցումն ավելի են նպաստում ընկերությունների գլոբալացմանը: Տնտեսական առումով գոյատևելու նպատակով 1957թ. համագործակցելու համաձայնություն ձեռք բերած Եվրոպական վեց երկրների թիվը դրանից երեք տասնամյակ հետո արդեն ձևավորված ընդհանուր շուկայի շրջանակներում կրկնապատկվեց, իսկ 2000 թվականին Եվրահամայնքն ավելի ընդլայնված կազմով կայացավ որպես աշխարհի խոշորագույն շուկա՝ մեկ ընդհանուր տնտեսական քաղաքականությամբ և մեկ ընդհանուր դրամանիշով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած մման զարգացումներին, վերակառուցումների ետևում կանգնած ուժը հիմնականում կառավարման ծրագրված և սթափ ռազմավարություններն են, այսուհանդերձ տնտեսական առաջընթացի մեքենայի իրական «վարորդը» Եվրոպայում շահավետ գործարքներն են (մասնավորապես հաջողվածներից է Հանսըն Թրաստի օրինակը²), որի հնարավորությունները, 1985 թվականից սկսած, հիմնված են եղել թուլացող դոլարի վրա³: Այս եզրակացությունը հիմնավորվում է ատենախոսության մեջ բերված բազմաթիվ օրինակներով՝ միաժամանակ կանխատեսելով, որ նոր հազարամյակի շեմին հզորացող Եվրոպայի հետ արդյունավետ մրցակցելու և համագործակցելու համար ԱՄՆ-ը և Կանադան պետք է ստիպված լինեն ավելի ընդլայնել հյուսիսամերիկյան ազատ առևտրի գոտին և Մեքսիկայի միջոցով ստեղծել Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրների անմախաղեպ մասշտաբներ ընդգրկող ընդհանուր շուկա⁴:

¹ Manassarian, Tatoul, "Economic Restructuring and the Globalization," Global Village, Toronto, February 19-22, 1991, pp.14-26.

² Andrew C. Brown, "Hanson Trust's U.S. Thrust," Fortune, October 14, 1995, pp. 47-54.

³ "Don't Stick to Your Knitting," International Management, March 1986, pp. 20-24.

⁴ Terry Dodsworth, "The U.S. Link in a Global Chain," Financial Times, July 30, 1997, p.19. Myron Magnet, "Saatchi & Saatchi Will Keep Gobbling," Fortune, June 23, 1997, pp. 36-40. Andrew Fisher, "Bertelsman Is Going for the Biggest Step

Ժամանակակից պայմաններում անհնար է չնկատել մասնաշաղկապի կարևորագույն միտում, ինչպիսին տնտեսական առաջընթացին զուգընթաց արտադրությունից դեպի ծառայությունների ոլորտի գերակայության անցումն է։ Այս միտումը թեև ավելի ցայտուն է արտահայտված և բնորոշ է զարգացած արդյունաբերական երկրներին, այսուհանդերձ, զարգացման դասական փուլերով ընթացող մյուս երկրները ևս անխուսափելիորեն կրում են դրա զգալի ազդեցությունը։

Տնտեսության զարգացման արդյունքում ձեռքի աշխատանքի ավելի մեծ տեսակարար կշիռ, հետևաբար՝ աշխատուժի բացարձակ քանակություն դուրս է մղվում արդյունաբերության, գյուղատնտեսության տարբեր ճյուղերից ու ենթաճյուղերից՝ իր տեղը զիջելով մեքենայացված, ավտոմատացված սարքերին և ամբողջական արտադրական գծերին։ Ժամանակի պահանջով աշխատատեղերն ավելի մեծ չափով, քան առաջ, տրամադրելի են դառնում որակյալ, մասնագիտացված աշխատուժի։ Գիտելիքը դառնում է որոշակի գնահատման և չափման ենթակա, մեծ պահանջարկ վայելող ապրանք¹։ Առավել մեծ է որակյալ աշխատուժի պահանջը հատկապես ծառայությունների ոլորտում, որի զարգացման նպատակով էլ յուրաքանչյուր երկիր, ելնելով իր համեմատական առավելություններից, փորձում է առավելագույն արդյունավետությամբ կազմակերպել մասնագետների որակավորումն ու վերաորակավորումը։ Առավել մեծ պահանջարկ են վայելում տեղեկատվության հավաքման, դասակարգման, դրա վերլուծության և օգտագործման հետ, գիտության, հետազոտությունների, համակարգչային ծրագրերի, առևտրի տարբեր, ներառյալ միջազգային, բնագավառների, հանգստի և սննդի կազմակերպման, զբոսաշրջության հետ կապված ծառայությունները։ ԱՄՆ-ի ծառայությունների ոլորտի առավել տարածված օրինակ է երաժշտության, կինոյի, հանգստի այլ ձևերն ընդգրկող ծառայությունների, ամերիկյան մշակույթի զանգվածային արտահանումը դեպի զանազան երկրներ։ Քիչ չեն մասնաճյուղի, տարբեր ազգերի (չինական, ճապոնական, մեքսիկական) ռեստորանների տարածումն աշխարհով մեկ, որոնք ևս առնչվում են ծառայությունների բնագավառին։

Համաշխարհային տնտեսության ներսում նկատվող մեկ այլ կարևորագույն միտում է *Արևելքի շուկաների որոշակի հզորացումը*։ Այն սկիզբ դրվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ճապոնիայի տնտեսության սրընթաց վերելքով՝ պայմանավորված թերևս միակը տվյալ երկրում՝ մարդկային ռեսուրսով²։ Այս երկիրն իր առաջընթացով, անկասկած, կարող է համարվել ժամանակակից հաջողության պատմություններից մեկը (success story)՝ բառացիորեն աշխարհը հեղեղած իր ապրանքներով, ծառայություններով և դրամով։ Ճապոնական պորտֆելային անընդհատ աճող ներդրումների շնորհիվ ճապոնական գործարանները, գրասենյակները և հանգստի կենտրոնները բաթվալաճում են աշխարհի բոլոր ծայրերում։ Մինչ ճապոնական առեղծվածը մնում է շատ մասնագետների հետազոտության առարկան, դրա դրական արդյունքներից օգտվում են ոչ միայն ճապոնացիները, այլև հենց իրենք՝ հարևան երկրները։

Այսօր Խաղաղօվկիանոսյան ավազանը Ճապոնիայի առաջնորդությամբ դարձել է աշխարհի արտադրական կենտրոնը³։ Մինգապուրը, Հարավային Կորեան և Հոնկոնգը գործարարների և քաղաքագետների շրջանում ընդունված ձևակերպմամբ վերածվել են «փոքր վագրերի» («little tigers»), որոնք լուրջ մարտահրավեր են նետել տասնամյակներով համաշխար-

in the U.S.," Financial Times, July 6, 1995, p.14. Louis Kraar, "Taiwan: Trading with the Enemy," Fortune, February 17, 1986, pp.89-90; Louis Kraar, "Pepsi's Pitch to Quench Chinese Thirsts," Fortune, March 17, 1989, pp.58-64; Louis Kraar, "The China Bubble Bursts," Fortune, July 16, 1987, pp. 86-89. Hugo Dixon and James Buchan, "Natwest Makes a Bid" Financial Times, August 6, 1993, p.1. Prahalad, C. K., and Yves L. Doz. The Multinational Mission Balancing Local Demands and Global Vision. New York: Macmillan, 1987, pp. 76-123. David Peterson, "U.S. and Canadian Relations: The Free Trade Agreement," Vital Speeches of the Day, January 1, 1988, 179-182.

¹ Peter F. Drucker, "The Coming of the New Organization," Harvard Business Review, January-February 1988, pp.45-53; Yoneji Masuda, The Information Society as Post Industrial society, Washington, D.C.: World Future Society, 1981, pp.165-189.

² Claudia Rosett, "Japan: So Much Yen, So Little Else," The Wall Street Journal, April 29, 1987, pp.30-32.

³ Claudia Rosett, "Taiwan's Perilous Midas Touch," The Wall Street Journal, June 2, 1987, p.33.

հային տնտեսության մեջ գերիշխող Արևմուտքի զարգացած երկրներին: Արևմուտքի առաջատար ընկերություններն, իրենց հերթին, դիմագրավելով գերարտադրության, քայքայվող շուկաների և տնտեսական այլ սուր խնդիրներ, հարկադրված են վերադարձվել և վերանայել անցյալում ձևավորված տնտեսությունները¹: Դրանք արդեն Արևելքի զարգացող շուկան դիտում են ոչ այնքան որպես սրգակից, որքան ներդրումների համար բարենպաստ միջավայր, որը թույլ կտա դրանց աճել և ավելացնել իրենց շահույթները:

Նախորդ միտումը պայմանավորում է նաև *Արևելքի և զարգացող, նորանկախ երկրների աճող դերը համաշխարհային տնտեսության ներսում և միջազգային կազմակերպություններում*: Արևելքում սկիզբ առած և Խորհրդային Միության փլուզումով շարունակվող այս միտումը տանում է դեպի ուժերի որոշակի վերաբաշխում, որը, մեր կանխատեսմամբ, կարող է ավարտուն տեսք ընդունել մարդկային զարգացման հետևանք դասվող նոր տնտեսակարգի կայացմամբ²:

Զարգացող և շուկայական տնտեսության ուղին ընտրած երկրների գերակշռող մեծամասնությունը փորձում է քաղաքական անկախացման գործընթացներն առավելագույնս օգտագործել իրենց տնտեսական անկախության օգտին: Միջազգային ասպարեզում տեղի ունեցող զարգացումները հանգեցրել են բազմաթեւ աշխարհի ձևավորման, ուր երբեմնի հզոր գերտերություններն այսօր հարկադրված են հաշվի նստել նոր ձևավորված ուժերի ու դրանց պահանջների հետ: Տարիմաստորեն, նախկինում մյուս երկրներին իրենց կամքը թելադրած գերտերություններն աստիճանաբար զիջում են դիրքերն ամգամ իրենց կողմից ստեղծված, նաև անուղղակիորեն ղեկավարվող կառույցներում: Շատ երկրների վերականգնման և զարգացման համար ետպատերազմյան շրջանի ամենանշանակալի նախապայմանն ու նպաստող ուժերից մեկը Մարշալի հայտնի պլանի իրագործումն էր ԱՄՆ-ի նախաձեռնությամբ, որին մեծապես նպաստեց նաև ավելի վաղ, նույն երկրի նախաձեռնությամբ ստեղծված միջազգային դրամական նոր, Բրետտոն-Վուդսյան համակարգը՝ այն սպասարկող երկու միջազգային կառույցներով: Համաշխարհային բանկում և Արժույթի միջազգային հիմնադրամում ունենալով թե՛ ազդեցություն և թե՛ դրա համար անհրաժեշտ զգալի բաժին՝ կանոնադրական կապիտալում, ԱՄՆ-ը տասնամյակներ շարունակ իր քաղաքական դաշնակիցների հետ միասին զարգացող և սոցիալիստական տարբեր երկրներում վարում էին տվյալ քաղաքական կողմնորոշման համար նպաստավոր ֆինանսատնտեսական քաղաքականություն: Շուկայական տնտեսության կողմնորոշման նոր երկրների միջազգային այդ կառույցներին անդամակցությամբ այսօր էապես փոփոխվել է նաև դրանցում զարգացող երկրների տեսակարար կշիռը: Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ում և ՀԲ-ում ունենալով ավելի շատ ձայներ, քան նախկինում, զարգացող երկրներն ի վիճակի են իրենց միացած նորանկախ, ժողովրդավար երկրների հետ միասին լուրջ ազդեցություն ունենալ որոշումների կայացման գործընթացի վրա՝ դրանք ուղղելով ի նպաստ զարգացող երկրների շահերի:

Այսպիսով, ժամանակի ընթացքում վարկերի տրամադրման, դրանց տոկոսադրույքների, մարման ժամկետների և որ պակաս կարևոր չէ, նաև վարկային ծրագրերի նպատակների և այլ պայմանների առումով զարգացող երկրները կարող են համապատասխանություն ստեղծել այդ կառույցների և իրենց երկրների տնտեսական քաղաքականությունների միջև:

Տնտեսական, արդյունաբերական նպատակներով տիեզերքի օգտագործումը կարելի է դասել համեմատաբար նոր, միաժամանակ խիստ հեռանկարային միտումների շարքին: Եթե շուկան ուսումնասիրող գործարարի երազանքն Արևելքն է, ապա արտադրական հարցերով մասնագիտացած գործարար – կառավարչի երազանքը տիեզերքն է, որը պայմանավորված է նաև տիեզերքում բնական մի շարք գործոնների՝ առաձգականության ուժի, մարդու կողմից

¹ James B. Treece, Mark Maremont, and Larry Armstrong, "Will the Auto Glut Choke Detroit?" Business Week, March 7, 1988, 54-62; Louis Uchitelle, "Economic Scene: A Worldwide Glut Criss," New York Times, December 17, 1987, D2.

² Manassarian, Tatoul, The New Economic Order: With or Without Government Interference, Protectionism and Strategic Alliances, University of Redlands, California, October, 1993, p. 124-141.

ստեղծած սահմանափակումների՝ շրջակա միջավայրի պահպանության, օրենքների կիրառման բացակայությամբ¹:

Տիեզերքում արտադրության կազմակերպման հնարավորություններն առավել գրավիչ են անդրազգային ընկերությունների համար: Օրենքի աճող գլոբալացմանը նպաստող միտումներն ու զարգացումները միջազգային ընկերություններին հիմք են տալիս գիտակցելու կատաղի մրցակցություն հրահրող Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Մայքլ Փորթլի պատգամած տեսության ռազմավարության սնանկությունը²: Փոխարենն ավելի ընդունելի է դառնում Հովարդ Պերլմուտերի և Դեյվիդ Հինմանի մշակած մոդելը, ըստ որի առաջարկվում է ընկերությունները միավորել համատեղ ռազմավարական գործընկերային կառույցներում, ուր համագործակցությունն ու մրցակցությունը հավասարակշռված կլինեն: Իրականում նման կառույցներն արդեն ապացուցել են իրենց օգտակարությունը թե՛ առանձին ընկերությունների, թե՛ նոր տեխնոլոգիաների մշակման ու կիրառման և թե՛ համաշխարհային տնտեսական առաջընթացի առումով³: Առավել ևս մեծ է դրանց դերը տիեզերքում արտադրությունների կազմակերպման և հետագա հետազոտությունների գործում, որոնք առանձին վերցրած ոչ մի խոշոր միջազգային ընկերություն ի վիճակի չէ իրականացնել:

Վերջին տարիներին գործնական քայլեր են արվել տիեզերական արտադրական տարածքների ստեղծման ուղղությամբ: Դրանք ծրագրվում են վարձով տրամադրել անկշռելիության պայմաններում տարբեր նյութերի արտադրության նպատակով: Սփեյս Ինդասթրիզ, Ուեսթինգհաուզ Էլեկտրիկ և Հյուսթըն ընկերությունների համատեղ աշխատանքների արդյունքը, այն է՝ նման տարածքներից մեկը նախատեսվում է ծառայեցնել ամերիկյան Շաթլերի թռիչքներին՝ որպես ուժանյութի աղբյուր և փորձարարական լաբորատորիա՝ տարբեր նյութեր ստանալու համար: Այն նախատեսվում է տիեզերական ուղեծրում պահել հնարավորին չափ երկար և օգտագործել այլ նպատակների, այդ թվում՝ դեղագործական և կենսաբանական արտադրանքի գտման, նոր դեղերի մշակման արագության և որակի կատարելագործման համար պրոտեինի լայն բյուրեղների աճեցման, բարձր արագությունների համակարգիչների և առաջավոր էլեկտրոնային սարքերի համար մեծ, գերզուլած կիսահաղորդիչ բյուրեղների աճեցման, նոր պոլիմերների և կատալիստների ստացման, բաց տարածության մեջ ապակե մանրաթելի մշակման, մետաղական տարբեր միացությունների և այլ նյութերի արտադրության համար, որը գրեթե անհնար է Երկիր մոլորակի վրա⁴:

Այսպիսով, ի տարբերություն բնական հանածոների և այլ ռեսուրսների, ժամանակակից բազմաբնույթ տեղեկատվությունը կարելի է բաժանել, փոխանակել տարբեր կողմերի միջև⁵: Այս ամենով հանդերձ՝ տեղեկատվության սպառումով հիմք է դրվում համագործակցության նոր, ավելի շահավետ ձևերի ու դրանց հետագա արդյունքների համար: Այս ամենը, լինելով աննախադեպ երևույթ համաշխարհային տնտեսության մեջ, պահանջում է որակապես նոր մոտեցումներ: Հետևաբար, առանց անհրաժեշտ կառուցվածքային տեղաշարժերի և հին մտածելակերպի փոփոխությունների, անհնար է ակնկալել շոշափելի արդյունքներ, առաջարկված տարբերակները թողնելով միայն տեսական, վերացական հարթության վրա⁶:

¹ E.Cornish (ed), Global Solutions: Innovative Approaches to World Problems, Bethesda, MD: World Future Society, 1996, pp. 80-81.

² M.E. Porter, Competitive Strategy: Techniques for Analyzing Industries and Competitors New York: Macmillan, 1990; M. E. Porter, Competitive Advantage: Creating and Sustaining Superior Performance, New York: Macmillan, 1995.

³ Howard V. Perlmutter and David A. Heenan, "Cooperate to Compete Globally," Harvard Business Review, March - April 1986, pp.136 - 152; Howard V. Perlmutter, "Building the Symbiotic Social Enterprise: A Social Architecture for the Future", World Futures 19 (1984): pp. 271 - 284.

⁴ Space Industries, Inc., 711 West Bay Area Boulevard, Suite 320, Webster, Texas; in Leland A.C. Weaver, "Factories in Space: The Role of Robots," The Futurist, May-June 1983 pp. 31-33.

⁵ Peter F. Drucker, "The Transnational Economy," The Wall Street Journal, August 25, 1987, pp. 21-22.

⁶ Martin S. Davis, "Two Plus Two Doesn't Equal Five," Fortune, December 9, 1995, pp.171-172.

Չնայած աշխարհով մեկ տեղի ունեցող առաջադիմական փոփոխություններին՝ մի շարք երկրներ շարունակում են կիրառել ազգայնամոլական, պետական հովանավորչական քաղաքականություն, ընդունել սահմանափակումներով արտաքին առևտուր իրականացնելու որոշումներ և օրենքներ¹։ Նման երկրները բանակցությունների, համաժողովների ժամանակ համաձայնելով փոխադարձության սկզբունքի հիման վրա վերացնել առևտրային արգելքները, իրականում շարունակում են արգելքներ ստեղծել արդար մրցակցության համար։ Դա բնորոշ է ոչ միայն զարգացող, այլև մի շարք զարգացած երկրների, որոնք գտնում են միջազգային համաձայնություններից խուսափելու նոր, ավելի կատարելագործված եղանակներ։ Եվրոպական երկրներն այսօր առաջ են անցել իրենց գլխավոր մրցակիցներից՝ Միացյալ Նահանգներից և Ճապոնիայից հատկապես ազատ առևտրի և պետական հովանավորչության մի շարք սկզբունքների արդյունավետ կիրառմամբ։ Ըստ որում, ինչպես և հարկային քաղաքականությունը, այդ սկզբունքները ժամանակի ընթացքում ենթակա են փոփոխությունների՝ խթանելու նոր արտադրությունների զարգացումը և պաշտպանելու սպառողների շահերը²։

Առավել տարածված են արտաքին առևտրային այսպես կոչված ոչ տարիֆային արգելքները³։ Դրանք ներառում են ոչ թե հարկեր արտահանվող և ներմուծվող ապրանքների վրա, այլ նախատեսում են ներմուծվող ապրանքների զանգվածային ստուգումներ՝ սահմաններին կամ նավահանգիստներում հատուկ արտոնագրերի, թույլտվությունների, նոր չափանիշների կիրառում, որոնց ձեռքբերումն ու հարակից պահանջների բավարարումը երկար ժամանակ և լրացուցիչ ծախսեր են պահանջում դրանք արտահանող երկրից՝ արդյունքում սահմանափակելով արտասահմանյան ապրանքների մուտքը ներքին շուկա։ Նման արգելքների կիրառումը համաշխարհային տնտեսության երեք կենտրոնների կողմից հետևյալ տեսքն ունի.

Ոչ տարիֆային արգելքներ

	<i>զարգացած երկրներից ներմուծվող ապրանքների</i>	<i>զարգացող երկրներից ներմուծվող ապրանքների</i>
ԱՄՆ	15%	17%
Եվրոպա	13%	29%
Ճապոնիա	23%	22%

Միաժամանակ, նույն երկրների մասնավոր հատվածի գործարար շրջանակները տարեց-տարի դիմագրավում են ավելի մեծ դժվարությունների՝ նախորդ տարիների համեմատ իրականացնելով կրճատված ծավալներով զարգացման և հետազոտությունների աշխատանքներ⁴։ Դրանց ֆինանսավորումը գնալով նվազում է, իսկ շատերի համար դառնում անհիմաստ՝ սրընթաց արագությամբ փոփոխվող տեխնոլոգիաների և նորամուծությունների կիրառման պայմաններում։ Չհասցնելով կիրառել սեփական նորամուծությունները՝ շատ ընկերություններ բառացիորեն չեն հասցնում դիմագրավել իրենց մրցակիցների նետած մարտահրավերները⁵։ Հաղթում են ֆինանսական առումով առավել հզոր ընկերությունները։ Սա ևս հուշում է միավորել մի քանի առանձին ընկերությունների ուժերը, նախ՝ գոյատևելու, ապա նաև հաղթելու մրցակցային սուր

¹ T. Peters and R. Waterman, In Search of Excellence, New York, N.Y.: Harper and Row, 1992, pp. 27-28.

² Mark M. Nelson and Stephen D. Moore, "Shaping Up: Industries in Europe Take on a New Look Through Restructuring," The Street Journal, February 2, 1987, pp. 15-19.

³ Coping with the 'New Protection': How the Multinationals Are Learning to Use It and Learning to Love It, "International Management, September 1986, pp. 20-26; "Can Asia's Four Tigers Be Tamed?" Business Week, February 15, 1988, pp. 46-50.

⁴ "Protectionism: Japanese Need Not Apply, " Time", March 14, 1988, p. 31.

⁵ Anderla, Georges, and Anthony Dunning, Computer Strategies 1990-9. New York: John Wiley and Sons, 1987. Botkin, J., D. Dimancesu, and Ray Strata. Global Stakes: The Future of High Technology in America. Cambridge, MA: Ballinger Publishing Co., 1982, pp. 37-38.

պայքարում¹: Համախմբվելով շուկայի ուսումնասիրություններն ու զարգացման, հետազոտական աշխատանքները դառնում են ավելի նպատակային և արդյունավետ: Նման միավորումների հիմնական ռազմավարությունն է համագործակցել՝ հաղթելու համար²: Եվ քանի դեռ առանձին ընկերությունները կուլ չեն գնացել հսկաների մրցակցությանը, դրանց մնում է մույն ուղին ընտրել, այն է՝ միավորվելով կազմել հսկա կառույցներ՝ հետապնդելով ընդհանուր նպատակներ ու շահեր:

Միավորվելու, համախմբվելու անհրաժեշտությունն առավել ակնհայտ է դառնում հատկապես տիեզերական հետազոտությունների, օվկիանոսի ընդերքի հետազոտման կամ այլ գերիզուցող ծրագրերի իրագործման ժամանակ, երբ ոչ մի խոշոր ընկերություն կամ երկիր ի վիճակի չէ առանձին աշխատանքներ տանել սեփական սահմանափակ ռեսուրսներով³: Պանամայի ջրանցքից մինչև մեր օրերի գերիզուցող մայրուղիների, խոշոր կամուրջների, նավթամուղների ու գազամուղների շինարարությունը ոչ միայն հաստատում է միավորման անհրաժեշտության գաղափարը, այլև ավելի է խորացնում համաշխարհային տնտեսության ներսում արդեն մի քանի տասնամյակ նկատվող երկրների տնտեսական փոխադարձ կախվածությունը:

Համաշխարհային տնտեսության նոր զարգացումներն ու գլխավոր միտումները պահանջում են ոչ միայն գործարար շրջանակների ռազմավարության, տնտեսական քաղաքականության փոփոխություններ, այլև անհատական նոր մտածելակերպի ձևավորում⁴: Սա իր հերթին հրամայական են դարձնում ստեղծված պայմաններից ելնելով գիտության ու կրթության տարբեր ճյուղերի զարգացումը, նոր մտեցումների արմատավորումն ու նոր որակի մասնագետների պատրաստումը: Այս ամենը բնական հարց է առաջացնում, թե որքանով են գործարար մարդիկ, կառավարիչներն ու տարբեր աստիճանների պաշտոնյաները պատրաստ դիմագրավելու ժամանակակից մարտահրավերները: Պատասխանն այնքան էլ գոհացուցիչ չէ ոչ զարգացող, ոչ էլ անգամ զարգացած երկրներում⁵:

Մասսաչուսեթսի տեխնոլոգիայի ինստիտուտի աշխատանքի արդյունավետությունն ուսումնասիրող հանձնաժողովն իր զեկույցում նշել է ընկերությունների ղեկավար շրջանակներում տեղ գտած գլխավոր թերությունները՝ կարճաժամկետ ֆինանսական արդյունքների հասնելու գերիշխող հակումը, միայն տեղական շահերին առաջնահերթություն տալը (parochialism), համագործակցության բացակայությունը տեղական ընկերությունների միջև և դրանց ներսում, բանվորներին շահագրգռելու և նրանց մասնագիտական որակավորումն ու վերաորակավորումը կազմակերպելու անբավարար մակարդակը, ինչպես նաև նորամուծություններն արագորեն նոր, մրցունակ գներով ապրանքների վերածելու խրոնիկական անկարողությունը: Ընկերությունների մեծ մասը պարզապես գործարար շրջանակների համար առաջնորդներ չի կրթում, ի վիճակի չէ մշակել հեռանկարային հիմնավոր ծրագրեր⁶: Ավելին, Լեստեր Տուրովի համոզմամբ, 21-րդ դարի գործարարներն այլևս տեղական կողմնորոշմամբ ի վիճակի չեն լինելու մրցակցել, նրանք պետք է պատրաստ լինեն գործել միջազգային ասպարեզում: Այս մասին են վկայում նաև ապագայի գործարար կառավարիչներին բնութագրող մի շարք այլ հեղինակների կանխատեսումները և հիմնավոր փաստարկները⁷:

Ապագայի գործարարը հաջողության հասնելու համար հարկադրված է լինել համաշխարհային ռազմավարության գիտակ, տեխնոլոգիայի վարպետ, գերազանց քաղաքագետ և առաջ-

¹ Frank P. Davidson, L.J. Giacometto, and Robert Salked (eds.), *Macroengineering and Infrastructure of Tomorrow*, Boulder, CO: Westview Press, 1978, pp. 61-68.

² Jesso von Putthamer, "The Industrialization of Space: Transcending the Limits to Growth," *The Futurist*, June 1979, in *Global Solutions*, pp. 76-84.

³ L.B. Taylor, *Commercialization of Space*, New York: Franklin Watts, 1987, pp. 101-114.

⁴ Leland A.C. Weaver, "Factories in Space: The Role of Robots," *The Futurist*, May-June 1987, pp. 29-34.

⁵ Warren Strobel, "U.S. Will Make Space for Business," *Insight*, March 7, 1988, p. 26.

⁶ Charles L. Gould and C.R. Gerber, "Skynet 2000: Raising Global Productivity Through Space Communications," *The Futurist*, February 1989, in Cornish, *Global Solutions*, pp. 85-89.

⁷ "Twenty-first Century Executive," *U.S. News and World Report*, March 7, 1992, pp. 48-51.

նորո՞ւմարդկանց շահագրգռելու կարողությամբ¹: Տնտեսագետների կողմից ակնկալվում է նաև, որ ապագան ի վերջո պատկանելու է գերիզոր ընկերություններին՝ համաշխարհային գործարար դաշնություններին²: Դրանց կառավարիչների գլխավոր մտահոգություններից մեկը կլինի հավասարակշռել տնտեսական շահերը տեղական մշակութային առանձնահատկությունների հետ:

Այսպիսով, համաշխարհային տնտեսության արդի գլխավոր միտումներն են՝ տեղեկատվական տեխնոլոգիաների անընդհատ կատարելագործումը, որը թույլ է տալիս համադրել ընկերության աշխատանքները միջազգային մասշտաբով, միջազգային դրամական համակարգի հետագա ազատականացումը, որը հնարավորություններ է ընձեռում օգտվել փոխարժեքների շարունակական տատանումներից, քաղաքական թշնամանքի, հակամարտության զգալի նվազումը, որը նոր շուկաներ մուտք գործելու և տնտեսական միություններ ձևավորելու լայն հնարավորություն է տալիս, Արևելքի և զարգացող, նորանկախ երկրների աճող դերը համաշխարհային տնտեսության ներսում և միջազգային կազմակերպություններում, որը տանում է դեպի ուժերի որոշակի վերաբաշխում, Արևելքի շուկաների որոշակի հզորացումը, որը նոր շուկա է ստեղծում և այն գրավիչ դարձնում ներդրումների համար, արտադրությունից դեպի ծառայությունների ոլորտի գերակայության անցումը, որը գիտելիքը դարձնում է արտահանման ամենակարևոր քաղաքականներից մեկը, տնտեսական, արդյունաբերական նպատակներով տիեզերքի օգտագործումը, որը գործարարության համար նոր հեռանկարներ է բացում: Մեր կողմից քննարկված գլխավոր միտումները թույլ են տալիս կանխատեսումներ անել ոչ միայն առանձին երկրների կամ դրանց խմբերի ու միությունների, այլև մարդկային զարգացման հնարավոր ուղղությունների վերաբերյալ:

Տարիներ շարունակ միջազգային շուկայում ունեցած գերիշխող դերի շնորհիվ զարգացած երկրներն այդ փոփոխություններն օգտագործել են հիմնականում իրենց օգտին: Չարգացող երկրները, այս առնչությամբ լուրջ մտահոգություն և դժգոհություն արտահայտելով միջազգային առևտրի գոյություն ունեցող համակարգի վերաբերյալ, միավորելով իրենց ուժերը, կոչ են արել քայլեր ձեռնարկել նոր միջազգային տնտեսակարգի հաստատման ուղղությամբ: Հատուկ այս նպատակով դեռ 60-ականների կեսերին գումարվել է *Միավորված ազգերի կազմակերպության Առևտրի և զարգացման համաժողովը (UNCTAD)*, որը հետագայում վերածվեց մշտապես գործող կառույցի: Դրա օգնությամբ վերջին տարիներին զգալիորեն կրճատվել են զարգացող երկրների հետ նախկինում գոյություն ունեցող առևտրային զանազան սահմանափակումները, որոշ չափով կայունացել են առաջին անհրաժեշտության ապրանքների, հումքի գները, ավելացել է զարգացած երկրներից զարգացող երկրներին տրամադրվող նյութական օգնությունը:

Միջազգային առևտրի և ձեռներեցության ընդհանուր միջավայրի վերլուծությունը՝ հիմնված քաղաքական, ֆինանսական, սոցիալական, տեխնոլոգիական և այլ հարակից պայմանների ու գործոնների վրա, հնարավորություն են ընձեռում որոշակիորեն կանխատեսել համաշխարհային տնտեսության ներսում հնարավոր նոր զարգացումներն ու միտումները, ինչպես նաև դրանց ազդեցությունը միջազգային առևտրային կապերի վրա:

Մեր գնահատմամբ *զարգացող և զարգացած երկրների միջև փոխհարաբերությունները մոտ ապագայում մեծ փոփոխություններ չեն կրի*: Ակնկալվում են, սակայն, զարգացող երկրների մի մասի տնտեսական աճի ավելի բարձր տեմպեր՝ մյուսների համեմատ, հաշվի առնելով դրանց մրցակցային առավելություններն ու մասնակցությունը տարբեր ռազմավարական միություն-

¹ Patricia Sanders and Andrzej K. Kozminski, "Emerging Global Management Styles", Proceedings of the Second International Conference of the Eastern Academy of Management, Athens, Greece, June 14-18, 1987, pp.107-111; Kenichi Ohmae, Triad Power: The Coming Shape of Global Competition (New York: Macmillan, 1985).

² Dicken, Peter. Global Shift: Industrial Change in a Turbulent World. New York: Harper & Row, 1986. Feingenbaum, E. A., and P. McCorbuck. The Fifth Generation: Artificial Intelligence and Japan's Computer Challenge to the World. Reading, MA: Addison - Wesley Publishing Co., 1983, pp.45-72.

ներին, ինչպես նաև ներքին տնտեսական արդյունավետ քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Ընդհանուր առմամբ, մարդկային զարգացման հեռանկարների կանխատեսումները կարող են հիմնվել երեք հնարավոր տնտեսական հիպոթեզների վրա՝ *համագործակցություն, հակամարտություն և մեկուսացում*: Հաշվի առնելով ազգային մրցակցային առավելությունների օգտագործման ակնհայտ անհրաժեշտությունը համագործակցության մեջ ներգրավված բոլոր կողմերի համար, մեր կողմից հակամարտության և մեկուսացման հնարավորությունները ենթադրվում են միայն քաղաքական ենթատեքստով՝ չբացառելով դրանց կարճաժամկետ տարբերակները ոչ զլորալ, այլ ընդամենը տարածաշրջանային հարթության վրա: Ըստ որում, ակնկալվում է համաշխարհային տնտեսության ուժի կենտրոնների ազդեցության ոլորտների հետագա ընդարձակում՝ նոր երկրների՝ այդ ուղեծրերի մեջ ներգրավվելու մեծ հավանականությամբ:

ՍՄԲԱՏ ԱՂԱՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

«ԳԼՈՒԲԱԼԻՅԱՆ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

«Գլոբալացում»¹ բարձրահինչյուն բառը ներըմբռնողաբար, թվում է, հասկանալի է, սակայն զլորալացման շուրջ, ինչպես ժամանակակից բացառիկություն, անընդմեջ ծագող բանավեճերում հանդիպում ենք դժվարությունների, որոնցից շատերը, մեր կարծիքով, կապված են նրա հասկացության չմշակված սահմանման մեջ:

Պատմական ժամանակահատվածի որոշ փուլերում զլորալի մասին պատկերացումը, ինչպես մարդկության գիտելիքների ամբողջականության և աշխարհի սահմանագծի մասին, փոխվում է՝ կախված նրա զարգացման փուլից: Իր հասկացության առավելագույն սահմաններին այն հասավ միայն մեծ աշխարհագրական հայտնագործություններից հետո, երբ երկիրը մարդկության գիտակցության և գործունեության մեջ դարձավ փակված (կլոր): Ուստի, զլորալը կարելի է ներկայացնել ինչպես ամբողջականության սահման, և տրամաբանական կլինի առաջարկել, որ զլորալից անցումը զլորալացման հենց սահմանային նպատակին հասնելու գործընթաց է, այսինքն՝ սահմանային ձև է ամբողջի (ամբողջականացման):

Հարկ է նշել, որ զլորալացումը ավելին է, քան զլորալ տնտեսության ձևավորումը, որ այն պատմական գործընթացի նպատակ է, որ ընդգրկում է բազում ինտեգրացիոն գործընթացներ, ինչպես միտումներ, որոնք որոշում են տվյալ գործընթացի դինամիկան և ինտեգրացիոնալացումը, որը զլորալացման արդի փուլն է: Այստեղ կարևոր է հասկանալ, որ զլորալացման գործընթացը համածինին հասնելու ճանապարհը չէ, այլ հանդիսանում է բազմաձևության կարևորագույն աղբյուր, այսինքն՝ բազում ձևերի միավորում է ամբողջի մեջ, որն էլ ներկայանում է ինչպես արդյունք:

Բազմաձևությունից ելնելով հարկ է նշել, որ զլորալացմանը հետևող աշխարհը ներկայանում է ինչպես միմյանց փոխկապված ինքնօրինակ մասնիկների ամբողջություն – սուբյեկտներ: Սուբյեկտների միջև եղած կապերը տարբեր են՝ կախված իրենց զարգացման փուլերից և նպա-

¹ «Գլոբալացում» շարադրանքի հիմքում տ.գ.դ., պրոֆ. Է.Արզոյանցի գիտական հայացքներն են: